ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/92

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 23.10.2020թ.),

քննելով ՀՀ ոստիկանության (հետայսու նաև՝ Պատվիրատու) գրասենյակային կահույքի և գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո-ԳՀԱՊՁԲ/ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի կողմից 20.10.2020թ. ներկայացված (21.10.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/92 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 20.10.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն 28.09.2020թ. ուղարկել է նամակ գրություն ՀՀ ոստիկանությանը, պատճեն ՀՀ ֆինանսների նախարարությանը ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13 N 2 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը հստակ չներկայացնելու վերաբերյալ՝ Օրենքի 13-րդ հոդված-գնման առարկայի բնութագիրը:

05.10.2020թ. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-2, որը մեր կողմից անընդունելի է, քանի որ կան անճշտություններ տեխնիկական բնութագրի մասով:

Պատվիրատուն պայմանագրի «տեխնիկական բնութագիր-ժամանակացույց» Հավելված 1-ում ապրանքի անվանումը և ապրանքային նշան ենթաբաժնում պատվիրում է անխափան սնուցման աղբյուրներ անվանմամբ ապրանք, սակայն ապրանքային մակնիշը նշվում է մարտկոց, այլ ոչ թե՝ անխափան սնուցման աղբյուր:

Մշված անհամապատասխանությունը ևս մեկ անգամ ապացուցում է մեր կողմից 28.09.2020թ. գրված նամակի իսկությունը՝ որտեղ մենք նշել էինք, որ հստակ չէր պարզաբանված մատակարարվող ապրանքի տեխնիկական պայմանները, որի հետևանքով տեղի էր ունեցել թյուրիմացություն:

Ելնելով վերը նշվածից չենք կարող վավերացնել պայմանագիրը և խնդրում ենք պարզաբանել՝ եթե մենք առաջարկել ենք այլ ապրանք, որը չէր համապատասխանում պատվիրատուի պահանջներին, ինչու ենք մենք ճանաչվել որպես հաղթող, մեր կողմից առաջարկված Վիետնամական Wbr gp 1272/28w ապրանքով, որը հանդիսանում է որպես մարտկոց՝ Օրենքի 34-րդ հոդված-հայտերի գնահատում 1 և 7 կետերը: Միաժամանակ խնդրում ենք հետ կանչել պայմանագիրը ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-2 և կրկին հայտնում ենք, որ մեր կազմակերպությունը չի հրաժարվում մատակարարել մեր կողմից N 2 չափաբաժնում նշված 50 հատ 588 000 (ներառյալ ԱԱՀ) արժողությամբ մարտկոցները կնքելով նոր պայմանագիր»:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից 20.10.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/92 ծածկագրով բողոքը (շտկված), որի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ լրացուցիչ նկատառումները և նոր պահանջները.

Եվ այսպես, ՀՀ ոստիկանության կարիքների համար հայտարարվել է ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով պահանջվել է՝ Անխափան սնուցման աղբյուր:

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն և ճանաչվել ընտրված մասնակից:

Ս.թ. հոկտեմբերի 5-ին «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի էլ. հասցեին է ուղարկվել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-2» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

Այնուհետև, Պատվիրատուի հետ քննարկման արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված «Անխափան սնուցման աղբյուր» ասելով, Պատվիրատուն նկատի է ունեցել բացառապես UPS սարքեր: Մինչդեռ «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ով առաջարկվել է հետևյալ ապրանք հետևյալ ապրանքանիշով՝ Անխափան սնուցման աղբյուր, Վիետնամական, Wbr gp 1272/28w, որը հանդիսանում է ոչ թե UPS, այլ մարտկոց:

Պայմանագրի կնքման փուլում Պատվիրատուն հայտնել է, որ տվյալ Ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարվել է բացառապես UPS սարքի ձեռքբերման նպատակով և եթե պայմանագիրը կնքելու փուլում «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվի հայտով ներկայացրած Վիետնամական մարտկոց հետևյալ տեխնիկական բնութագրի՝ Wbr gp 1272/28w, ապա նշված ապրանքը չի ընդունվի Պատվիրատուի կողմից՝ մարտկոց հանդիսանալու պատճառով:

Այդ իսկ պատճառով վերոհիշյալ իրավիճակի վերաբերյալ իրավական գնահատական ստանալու համար «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն համապատասխան բողոքով դիմել է դեռևս 09.10.2020թ., սակայն սխալմամբ այն հասցեագրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, այլ ոչ թե գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Վերջնական շտկված բողոքը բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանին ներկայացվել է 20.10.2020թ.:

Նշված բողոքի վերաբերյալ հայտարարությունը www.gnumner.am պաշտոնական կայքում հրապարակվել է 21.10.2020թ.:

21.10.2020թ. բողոքարկված ընթացակարգով գնահատող հանձնաժողովի կողմից հրավիրվել է նիստ (նիստի անցկացման ժամ նշված չէ արձանագրությամբ), տվյալ նիստի թիվ 6 արձանագրության (կցվում է) 1-ին կետով «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից՝ սահմանված ժամկետում ստորագրված պայմանագիրը չներկայացնելու և շնորհումը չընդունելու հիմքով, որից հետո 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն: Նույն արձանագրությամբ որոշում է կայացվել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին 26.010.2020թ. հրավիրել բանակցությունների:

Այնուհետև ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2020թ. հրավիրված նիստի թիվ 7 արձանագրությամբ (կցվում է) արձանարվել է, որ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն չի ներկայացել գների նվազեցման շուրջ բանակցությունների, և որոշում է կայացվել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին և վերջինիս հրավիրել բանակցությունների:

Այնուհետև ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.10.2020թ. հրավիրված նիստի թիվ 8 արձանագրությամբ (կցվում է), հիմք ընդունելով, որ «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ն չի ներկայացել բանակցությունների, որոշում է կայացվել Ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

Չափաբաժին	Գնման առարկայի համառոտ նկարագրություն	Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում	Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի /ընդգծել համապատասխան տողը/	Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն
2	անխափան սնուցման աղբյուրներ	«Նորմա-պլյուս»ՍՊԸ «Էյչ Գրուպ» ՍՊԸ	4-րդ կետի	Գները գերազանցել են նախահաշվային գինը

Հարգելի պարոն Ներսիսյան, գտնում ենք, որ սույն գործողությունների արդյունքում ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13 ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության հետևյալ խախտումները.

ա) Ըստ www.gnumner.am կայքում հրապարակված տեղեկատվության՝ «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ն 20.10.2020թ. ներկայացված շտկված բողոքը և դրա վերաբերյալ հայտարարությունը կայքում հրապարակվել է 21.10.2020թ.: Մինչդեռ, գնահատող հանձնաժողովը այդ հայտարարությունը կայքում հրապարակելուց հետո այնուամենայնիվ շարունակել է կատարել գործողություններ Ընթացակարգի հենց այդ չափաբաժնի մասով՝ հապատասխանաբար նիստեր հրավիրելով 21.10.2020թ., 26.10.2020թ. և 28.10.2020թ.:

Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը չի բավարարում սույն հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել սույն հոդվածի պահանջները, ապա սույն մասով սահմանված ժամկետում շտկված և գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Այպիսով, վերոհիշյալ փաստերը վկայում են, որ գնահատող հանձնաժողովը կատարել է մի շարք գործողություններ Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արդեն իսկ կասեցված Ընթացակարգով, ինչը ոչ իրավաչափ է:

Ավելին, պայմանագրի կնքման համար սահմանված ժամկետում «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ն ներկայացրել է բողոք, որով վիճարկվել է պայմանագիր կնքելու գործընթացը, սակայն անկախ առկա բողոքից, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում էկայացրել զրկել ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից՝ սահմանված ժամկետում կնքված պայմանագիրը չներկայացնելու հիմքով, մինչդեռ Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասը իմպերատիվ սահմանում է, որ սահմանված ժամկետում շտկված և գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված: Այլ կերպ ասած, շտկված և 20.10.2020թ. ներկայացրած բողոքը

պետք է կասեցներ պայմանագիր կնքելու գործընթացը (06.10.2020թ. մինչև 19.10.2020թ. ներառյալ), ինչը տվյալ դեպքում չի կատարվել:

Վերոհիշյալի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ հոդվածի և 51-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, և գնահատող հանձնաժողովի կողմից «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ի 20.10.2020թ. ներկայացված շտկված բողոքի վերաբերյալ հայտարարությունը կայքում հրապարակվելու օրվանից՝ 21.10.2020թ., տվյալ Ընթացակարգով իրականացված բոլոր գործողությունները և կայացված որոշումները իրավաչափ չեն, քանի որ խախտել են Օրենքի և 51-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

բ) Գտնում ենք, որ նաև ոչ իրավաչափ է գնահատող հանձնաժողովի կողմից «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ից UPS սարքերի պահանջը:

Ինչպես արդեն նշել ենք, Պատվիրատուի հետ քննարկման արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված «Անխափան սնուցման աղբյուր» ասելով, Պատվիրատուն նկատի է ունեցել բացառապես UPS սարքեր: Մինչդեռ «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ով առաջարկվել է հետևյալ ապրանք հետևյալ ապրանքանիշով՝ Անխափան սնուցման աղբյուր, Վիետնամական, Wbr gp 1272/28w, որը հանդիսանում է ոչ թե UPS, այլ մարտկոց:

Նշված տեխնիկական բնութագրով նման ապրանքանիշի սարքը համարվել է Հրավերի պահանջներին բավարարող, ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից, նրան ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ հենց այս ապրանքատեսակի մասով, և գտնում ենք, որ նման պայմաններում գնահատող հանձնաժողովը ուղղակի իրավունք չունի տվյալ պայմանագրի կատարման փուլում չընդունել պայմանագրով նախատեսված հետևյալ ապրանքատեսակը՝ Անխափան սնուցման աղբյուր, Վիետնամական, Wbr gp 1272/28w, այն հիմքով, որ այն հանդիսանում է ոչ թե UPS, այլ մարտկոց: Հենց այս մտահոգությունից ելնելով՝ «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ն դիմել է բողոքներ քննող անձին՝ իրավական գնահատական ստանալու համար հետագա հնարավոր զարգացումների վերաբերյալ:

Բացի այդ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով նախատեսված Անխափան սնուցման աղբյուրը չի կարող բնութագրվել որպես բացառապես USP սարք:

Մասնավորապես, համապատասխան գրականության մեջ անխափան սնուցման աղբյուր են համարվում թե՛ գեներատորը, թե՛ USP սարքը և թե՛ մարտկոցը:

Ըստ համապատասխան աղբյուրների՝ անխափան սնուցման աղբյուրը հատուկ սարք է, որը էներգիա է ապահովում տարբեր էներգիայի սպառողների համար: Սնուցման աղբյուրները բաժանվում են առաջնային և երկրորդային:

Առաջին խումբը ներառում է փոխարկիչներ: Նրանց հիմնական նպատակը ցանկացած տեսակի էներգիա էլեկտրական էներգիայի վերածելն է: Այսինքն՝ էներգիայի առաջնային աղբյուրը էլեկտրական էներգիայի գեներատորն է:

Առաջնային էներգիայի աղբյուրները ներառում են քիմիական հոսանքի աղբյուրներ (գալվանական բջիջներ, վառելիքի բջիջներ, մարտկոցներ, ռեդոքսի բջիջներ) և այլք (ֆոտոէլեկտրական փոխարկիչներ, էլեկտրամեխանիկական հոսանքի աղբյուրներ, ջերմաէլեկտրական փոխարկիչներ, MHD գեներատորներ, ռադիոիզոտոպային էներգիայի աղբյուրներ):

Միջնակարգ աղբյուրները փոխարկում են էլեկտրական էներգիան: Նրանք թույլ են տալիս ձեզ ստանալ անհրաժեշտ պարամետրեր ունեցող տարբեր սարքերի համար: Այս խումբը ներառում է տրանսֆորմատորներ և աուտոտրանսֆորմատորներ, լարման կայունացուցիչներ, հոսանքի կայունացուցիչներ, զարկերակային փոխարկիչներ, թրթռման տրանսֆորմատորներ, ինվերտորներ և տրանսֆորմատորներ:

Հարգելի պարոն Ներսիսյան, խնդրում ենք սույն բողոքով կայացրած որոշման պատճառաբանական մասում անդրադառնալ և գնահատական տալ այն հարցին, թե արդյոք կնքված պայմանագրի արդյունքում Պատվիրատուն իրավունք կունենա «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկած Անխափան սնուցման աղբյուրը (Վիետնամական, Wbr gp 1272/28w) չընդունել այն հիմքով, որ այն հանդիսանում է ոչ թե UPS, այլ մարտկոց: Այլ կերպ ասած խնդրում և ակնկալում ենք իրավական գնահատականի արժանացնել այն հարցը, որ Պատվիրատուն պարտավոր է ընդունել «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկած Անխափան սնուցման աղբյուրը (Վիետնամական, Wbr gp 1272/28w):

Սույն խնդիրը գնահատելիս՝ խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնի մասով չկա որևէ նշում կամ հստակեցում, որ պատվիրատուն ակնկալել է բացառապես UPS սարք, իսկ Հրավերով ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է նաև մարտկոցի տեխնիկական պարամետրերին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները, օրինակ, Պատվիրատուին արգելելու կատարել որոշակի գործողություններ, գտնում ենք, որ այս իրավունքի համատեքստում բողոքներ քննող անձը իրավասու է ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-2 ծածկագրով կնքվելիք պայմանագրով արգելել ՀՀ ոստիկանությանը չընդունել «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվելիք Անխափան սնուցման աղբյուրը (Վիետնամական, Wbr gp 1272/28w) միայն հիմքով, որ վերջինս հանդիսանում է մարտկոց, այլ ոչ թե UPS սարք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ…:

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1.Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ գնահատող հանձնաժողովի 21.10.2020թ., 26.10.2020թ. և 28.10.2020. տեղի ունեցած նիստերի թիվ 6, 7 և 8 արձանագրություններով կայացված բոլոր որոշումները դադարեցնելու վերաբերյալ:

2.Պարտավոցենել գնահատող հանձնաժողովին դադարեցնել ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտատարելու վերաբերյալ որոշումը:

3. ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-2 ծածկագրով կնքվելիք պայմանագրով արգելել ՀՀ ոստիկանությանը չընդունել «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվելիք Անխափան սնուցման աղբյուրը (Վիետնամական, Wbr gp 1272/28w) այն հիմքով, որ մատակարարված ապրանքը հանդիսանում է մարտկոց:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.10.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքի լրացմամբ ներկայացված դիրքորորոշումը և պահանջները:

2. <u>ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և հիմնավորումները.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.10.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2020/92 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/92 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից հայտարարվել է ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ-ՏԵԽ/2020/Հ-13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3. «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի կողմից 20.10.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որի վերաբերյալ հայտարարությունը 21.10.2020թ. հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.10.2020թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից՝ սահմանված ժամկետում ստորագրված պայմանագիրը չներկայացնելու և շնորհումը չընդունելու հիմքով, այնուհետև 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.10.2020թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն չի ներկայացել գների նվազեցման շուրջ բանակցության, որի արդյունքում որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին և վերջինիս 28.10.2020թ. հրավիրել բանակցության:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.10.2020թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն չի ներկայացել բանակցության և որոշում է կայացվել Ընթացակարգը հայտարարել չկայացած:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի ներկայացված բողոքը՝ կից նյութերով, «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ-ՏԵԽ/2020/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ***ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) ***իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.***

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. ***պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ***, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը

տրամադրում է էլեկտրոնային եղանակով: ***<u>Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:</u>***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:</u>***

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: ***<u>Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:</u>***

Այսպես՝ ՀՀ ոստիկանության կողմից հայտարարվել է ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ-ՏԵԽ/2020/Հ-13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2020թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

«Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի կողմից 20.10.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որի վերաբերյալ հայտարարությունը 21.10.2020թ. հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 21.10.2020թ. շարունակելով իր աշխատանքը, նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրել է, որ «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից՝ սահմանված ժամկետում ստորագրված պայմանագիրը չներկայացնելու և շնորհումը չընդունելու հիմքով, այնուհետև

2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.10.2020թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ արձանագրել է, որ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն չի ներկայացել գների նվազեցման շուրջ բանակցության, որի արդյունքում որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ին և վերջինիս 28.10.2020թ. հրավիրել բանակցության:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.10.2020թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ արձանագրել է, որ «Նորմա Պլյուս» ՍՊԸ-ն չի ներկայացել բանակցության և որոշում է կայացվել Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ-ՏԵԽ/2020/Հ-13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և քարտուղարի գործողությունները, արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

3. ***Պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումների համակարգող, որը՝***

1) պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար.

2) եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ.

3) իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները.

4) ***կազմում և պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում տվյալ գնման ընթացակարգի արձանագրությունը*** և պայմանագիրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր ***գնման գործընթացի համար պատասխանատու են*** պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև ***իրենց վերապահված իրավասությունների մասով՝ գնումները համակարգողը***:

Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ Գնահատող հանձնաժողովի՝ նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և ***յուրաքանչյուր նիստի արդյունքում*** նիստին ներկա հանձնաժողովի անդամները և

<u>բարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը</u>: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է.:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից</u> մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:***

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլև նաև մասնակիցների «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը՝ օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու բավականին երկար գործընթաց՝ նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու պայմանները:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.10.2020թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից՝ սահմանված ժամկետում ստորագրված պայմանագիրը չներկայացնելու և շնորհումը չընդունելու հիմքով:

Մինչդեռ արձանագրում եմ, որ ԳՀԱՊՁԲ-ԿԱ-ՏԵԽ/2020/Հ-13 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի կողմից 20.10.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որի վերաբերյալ հայտարարությունը 21.10.2020թ. հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում և Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնման գործընթացը ինքնաբերաբար համարվել է կասեցված Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ խախտելով Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, արդեն իսկ 21.10.2020թ. կասեցված Ընթացակարգով, շարունակելով գնման գործընթացը, 21.10.2020թ., 26.10.2020թ. և 28.10.2020թ. հրավիրել է նիստեր և

արդյունքում Ընթացակարգը բողոքի առարկա հանդիսացող թիվ 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել է չկայացած:

Նման պայմաններում գտնում եմ, որ 21.10.2020թ. կասեցված Ընթացակարգի պայմաններում տվյալ Ընթացակարգով իրականացված հետագա բոլոր գործողությունները և կայացված որոշումները իրավաչափ չեն և ենթակա են դադարեցման, քանի որ իրականացվել են Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:

Միաժամանակ, ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.10.2020թ. նիստի թիվ 6 արձանագրությունը՝ համաձայն որի «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից, արձանագրում եմ, որ բացակայում է ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ-ՏԵԽ/2020/Հ-13 ծածկագրով գնման գործընթացի կազմակերպման պատասխանատուի՝ գնումները համակարգողի (հանձնաժողովի քարտուղարի) ստորագրությունը, մինչդեռ Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետով հստակ սահմանվում է, որ Գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր նիստի արդյունքում ***<u>քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում է այդ նիստի արձանագրությունը</u>***, որը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Ինչ վերաբերում է բողոքով ներկայացված Ընկերության այն դիտարկմանը, որ Պատվիրատուի հետ քննարկման արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված «Անխափան սնուցման աղբյուր» ասելով Պատվիրատուն նկատի է ունեցել բացառապես UPS սարքեր: Մինչդեռ «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ով առաջարկվել է հետևյալ ապրանքանիշով Անխափան սնուցման աղբյուր՝ Վիետնամական, Wbr gp 1272/28w, որը հանդիսանում է ոչ թե UPS, այլ մարտկոց, ապա սույն մասով արձանագրում եմ, որ.

ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ-ՏԵԽ/2020/Հ-13 ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 2 չափաբաժնով սահմանվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
անխափան սնուցման աղբյուրներ	800 ՎԱ, 50-60Hz, 220-240Վ: Մարտկոցի հզորությունը ՝ 12Վ 7Ա/Ժ: Էլեկտրական հոսանքին միացվող համապատասխան լար: Երաշխիքային սպասարկումը մեկ տարի: Բեռնաբարձումը առաքումը, տեղափոխումը (պահանջված հասցեով) և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի

	միջոցների հաշվին (սույն պարբերությունում շարադրված պարտադիր պահանջները վերաբերվում են նաև երաշխիքային սպասարկման դեպքերին):

Ընկերության կողմից հայտով հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, թիվ 2-րդ չափաբաժնի մասով ներկայացվել է հետևյալ տեսքով՝

Հ/հ	Ֆիրմային անվանումը	Ապրանքային նշանը	Մակնիշը	Արտադրողի անվանումը	Տեխնիկական բնութագրերը
2	Անխափանման սնուցման աղբյուրներ	Անխափանման սնուցման աղբյուրներ	Wbr gp 1272/28w	Վիետնամ	800 ՎԱ, 50-60Hz, 220-240Վ: Մարտկոցի հզորությունը ՝ 12Վ 7Ա/Ժ: Էլեկտրական հոսանքին միացվող համապատասխան լար: Երաշխիքային սպասարկումը մեկ տարի: Բեռնաբարձումը ,առաքումը, տեղափոխումը (պահանջված հասցեով) և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին (սույն պարբերությունում շարադրված պարտադիր պահանջները վերաբերվում են նաև երաշխիքային սպասարկման դեպքերին):

ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ-ՏԵԽ/2020/Հ-13-2 ծածկագրով պայմանագրի նախագծի Հավելված 1-ը՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, 2-րդ չափաբաժնի մասով սահմանվել է հետևյալ տեսքով՝

անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
Wbr gp 1272/28w Վիետնամ անխափան սնուցման աղբյուրներ	800 ՎԱ, 50-60Hz, 220-240Վ: Մարտկոցի հզորությունը ՝ 12Վ 7Ա/Ժ: Էլեկտրական հոսանքին միացվող համապատասխան լար: Երաշխիքային սպասարկումը մեկ տարի: Բեռնաբարձումը ,առաքումը, տեղափոխումը (պահանջված հասցեով) և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին (սույն պարբերությունում շարադրված պարտադիր պահանջները վերաբերվում են նաև երաշխիքային սպասարկման դեպքերին):

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:***

Ընդ որում՝ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանվում է, որ ***ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: ***Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:***

Վերը նշված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ***ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:***

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ-ՏԵԽ/2020/Հ-13 ծածկագրով ընթացակարգի հրավերով թիվ 2 չափաբաժնով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը, համադրելով այն Ընկերության կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի, ինչպես նաև ՀՀ Ո

ԳՀԱՊՁԲ-ԿԱ-ՏԵԽ/2020/Հ-13-2 ծածկագրով պայմանագրի նախագծի Հավելված 1-ում՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում, ներառված ապրանքի տեխնիկական բնութագրի հետ, արձանագրում եմ, որ բողոքի առարկա հանդիսացող թիվ 2-րդ չափաբաժնի մասով ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրի նախագծում ներառվել է՝ համաձայն «Ռոյալջուր Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ պահպանվել են վերը նշված իրավակարգավորումներով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված հետևյալ պահանջին՝ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-2» ծածկագրով կնքվելիք պայմանագրով արգելել ՀՀ ոստիկանությանը չընդունել «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվելիք Անխափան սնուցման աղբյուրը (Վիետնամական, Wbr gr 1272/28w), այն հիմքով, որ մատակարարված ապրանքը հանդիսանում է մարտկոց, ապա գտնում եմ, որ բողոքի պահանջը սույն մասով անհիմն է, միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշված կարգավորումը դուրս է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված լիազորությունների շրջանակներից սույն պահանջն ենթակա է մերժման:

Այսպիսով՝ լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննելով «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի կողմից 20.10.2020թ. ներկայացված բողոքը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի կողմից 20.10.2020թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝

1. պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում.

1.1 գնահատող հանձնաժողովի 21.10.2020թ., 26.10.2020թ. և 28.10.2020թ. տեղի ունեցած նիստերի թիվ 6, 7 և 8 արձանագրություններով կայացված որոշումները դադարեցնելու վերաբերյալ:

1.2 Ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշումը դադարեցնելու մասին:

2. Բողոքի պահանջը՝ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-2» ծածկագրով կնքվելիք պայմանագրով արգելել ՀՀ ոստիկանությանը չընդունել «Ռոյալջուր ինվեստ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվելիք Անխափան սնուցման աղբյուրը (Վիետնամական, Wbr gr 1272/28w), այն հիմքով, որ մատակարարված ապրանքը հանդիսանում է մարտկոց, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**